ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հասցե՝ Հայաստան, Երևան 0002, Պուշկինի 56ա, Հեռ.՝ (+374 10) 53-75-51,
էլ. փոստ՝ ombuds@ombuds.am, Կայք՝ www.pashtpan.am

№ 03/07/6033-18

«07» 11 2018թ.

**«ԱՅ ԹԻ ՊԼԱԶԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ Լ. ՍԵՐԱՅԴԱՐՅԱՆԻՆ**

Հասցե, ք. Երևան Մաշտոցի փ. 4/40
էլ. փոստ՝ info@itplaza.am

Հարգելի՛ պարոն Սերայդարյան,

ՀՀ Ֆինանսների նախարարության 2018 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 01.1/26-1/19975-18 գրության համաձայն՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և «Այ Թի Պլազա» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ ՄԻՊԱ-ԳՀԱՊՁԲ-18/8-2-28 պայմանագիրը (Այսուհետ՝ պայմանագիր) ՀՀ ֆինանսների նախարարության կողմից չի կարող հաշվառվել, քանի որ ՄԻՊԱ-ԳՀԱՊՁԲ-18/8-2 ծածկագրով կազմակերպված գնման գործընթացի հրավերում գնման առարկայի հատկանիշները պարունակել են հղում համակարգչային մոնիտորի կոնկրետ մոդելին, ինչը չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջներին:

Միաժամանակ, հարկ է նշել, որ ՄԻՊԱ-ԳՀԱՊՁԲ-18/8-2 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում ՀՀ Ֆինանսների նախարարության կողից արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ ՀՀ մարդու

իրավունքների պաշտպանի աշխատակազմը 2018 թվականի հոկտեմբերի 5-ին նախարարություն է ներկայացրել համապատասխան պարզաբանումներ, որոնք սակայն նախարարության կողմից չեն ընդունվել:

Ելնելով վերը նշվածից և հիմք ընդունելով պայմանագրի 8.3 կետը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը 2018 թվականի նոյեմբերի 8-ից միակողմանիորեն լուծում է պայմանագիրը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Ֆինանսատնտեսագիտական և
հաշվապահական հաշվառման վարչություն
Կատարող՝ Մարիաննա Կատվալյան
Հեռ.՝ (010) 53-94-48